26-731

05 JAN 2010

ԽՍՀՄ ՖԺԿ

ՊԵՏԱՇԽՆԽԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 45 | 10 հունիսի 1939 թ. | Սխեմա Գ—16

ՊԵՏԱՇԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ, ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱՀՍԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻՆ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ ՅԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻՆ

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների կողմից վերահսկողությունը ստորին խնայողական դրամարկղների վրա ուժեղացնելու մասին:

Մի քանի ստորին խնայդրամարկղների վատ աշխատանքի հիմնական պատճառն այն է, որ շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղների ղեկավար կազմը կենդանի և կոնկրետ ղեկավարություն չի ցույց տալիս ստորին դրամարկղներին:

Մի շարք տեղերում շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղների վարիչներն ու գլխավոր հաշվապահները անձամբ շատ քիչ են լինում, որ տեղում ստուգեն ստորին դրամարկղի

26731
11.09.2013

աշխատանքը և ստորին խնայդրամարկղներն այցելելու ժամանակ մանրամասնորեն չեն ծանոթանում աշխատանքների դրության հետ, վատ են հրահանգում աշխատողներին, աչքաթող անելով յեղած թերությունները, միջոցներ ձեռք չառնելով այդ թերությունները վերացնելու և դրամարկղներին անհրաժեշտ գործնական ոգնություն ցույց տալու համար։

Շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղների վարիչների և գլխավոր հաշվապահների կողմից կենդանի վերահսկողության և հրահանգման բացակայությունը հասցնում է այն բանին, որ նրանք վատ են իմանում իրենց կադրերը, յուրաքանչյուր առանձին աշխատակցի աշխատանքը, չեն իմանում յուրաքանչյուր առանձին խնայդրամարկղի անբավարար աշխատանքի արմատական պատճառները։

Այդ բոլորի հետևանքը լինում է ստորին խնայդրամարկղների գործունեության թույլ զարգացումը, ավանդների ներգրավման աշխատանքների ոպերացիոն-դրամարկղային աշխատանքների սխալ դրվածքը, ավանդատուների և դեբիտորների պարտատոմսատերերի անբավարար սպասարկումը և յերբեմն խեղաթյուրումներ աշխատանքներում։ Այնտեղ, որտեղ շրջանային և կենտրոնական խնայդրամարկղների

ՀՍՍՌ ԳՊ

կողմից սիստեմատիկ վերահսկողությունն ստորին խնայդրամարկղների վրա բացակայում է, կամ թե որտեղ այն վատ է իրականանում, չի ապահովվում պետական միջոցների անվթարությունը, արժեքների և արժեքավոր բլանկների պահպանման կանոնների պահպանումը, չի ապահովվում վճարների ժամանակին կանխումը և ստեղծվում է ստորին խնայդրամարկղներում չարաշահումներ կատարելու հնարավորություն։

Մի շարք տեղերի ստորին խնայդրամարկղներում յերկար ժամանակի ընթացքում սիստեմատիկորեն կատարված չարագործությունների մասին յեղած տվյալները, որոնք ստացվել են վերջին ժամանակներս, ասում են այն մասին, որ այդ չարագործությունները կարող եյին տեղի ունենալ գլխավորապես այն պատճառով, որ շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղների կողմից վերահսկողություն չի յեղել ստորին խնայդրամարկղների աշխատանքների վրա։ Խնայդրամարկղներում՝ կանխիկ դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների տեղում ամեն յեռամսյակում ստուգում կատարելու սահմանված կարգը չի կատարվում, վարչություններն այդ գործի վրա վերահսկողություն չեն ունենում և իրենց կողմից չեն պահանջում նման ստուգումներ կատարելը։

Գլխավոր Վարչությունը նորից ընդգծում է շրջանային խնայդրամարկղների վարիչների և գլխավոր հաշվապահների կողմից՝ ստորին խնայդրամարկղների աշխատանքների, արժեքները պահելու և հաշվի առնելու սահմանված կարգը աշխատակիցների կողմից պահպանելու, գործառնությունները ճիշտ կատարելու, ավանդատուների սպասարկման վարակի, ավանդների և ավանդատուների ներգրավման աշխատանքների կազմակերպման ճշտության և այլնի վրա սիստեմատիկ վերահսկողություն ունենալու անհրաժեշտությունը։ Խնայդրամարկղների աշխատանքների վրա վերահսկողություն ունենալը պետք է անցկացվի ամեն որ՝ խնայդրամարկղից ստացվող հաշվետվությունը և հաշվետվության փաստաթղթերը ուշի-ուշով ստուգելու միջոցով և խնայդրամարկղի աշխատանքների դրության հետ մանրամասնորեն ծանոթանալու միջոցով ամեն անգամ, երբ շրջխնայդրամարկղի վարիչը գլխավոր հաշվապահը և տեսուչն այցելում են այդ դրամարկղները։

Դրա հետ միասին Գլխավոր Վարչությունը պարտավորեցնում է շրջանային (կենտրոնական) խնայողական դրամարկղների վարիչներին և գլխավոր հաշվապահներին՝ ապահովել իրենց

հաշվետու ստորին խնայդրամարկղների աշխատանքների հատուկ պարբերական ստուգումների կատարումը, անկախ այն վերաստուգումներից, որոնք տեղի են ունենում վերաստուգիչ ապարատի ուժերով։

Յուրաքանչյուր ստորին խնայդրամարկղի պարբերաբար ստուգումները պետք է կատարվեն շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչի, գլխավոր հաշվապահի կամ տեսչի կողմից՝ վոչ պակաս, քան յեռամսյակը մեկ անգամ։

Այդ ստուգումների ժամանակ պետք է մտնեն դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների ստուգումները, որոնք նախատեսված են «պահեստարանային տնտեսությունը պետաշխնայդրամարկղներում վարելու կանոններով» (№ 30, 27 մարտի 1939 թ. հոդված 12)։

Նախքան ստուգման համար խնայդրամարկղը մեկնելը՝ շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչը (գլխավոր հաշվապահը, տեսուչը) պետք է մանրամասնորեն ծանոթանա շրջխնայդրամարկղում յեղած այն նյութերի հետ, որոնք բնորոշում են տվյալ ստորին խնայդրամարկղի աշխատանքի դրությունը, պարզել, թե բողոքներ խնայդրամարկղի աշխատանքների դեմ

չկան արդյոք, թե խնայդրամարկղի կողմից ներկայացրած հաշվետվությունը նկատողություններ չի հարուցում արդյոքնրա վորակի և ներկայացման ժամկետների նկատմամբ, չկան արդյոք վորևե թերություններ գործառնությունների ձևակերպման և հաշվառման գործում, հետագա վերահսկողության բոլոր ուղարկված ձև № 30 տեղեկանքներին են արդյոք խնայդրամարկղի կողմից տրվել սպառիչ պատասխան և այլն։

Ստուգման ծավալը վորոշում է շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչը՝ հաշվի առնելով յենթակա խնայդրամարկղի աշխատանքների դրության մասին յեղած տվյալները՝ առ ստուգման որը։

Սակայն, վորպես մինիմում, ընդամին պետք է տրվի հետևյալը.

1. Ստուգող անձը յենթակա խնայդրամարկղը գալու որը պարտավոր է հաշվել խնայդրամարկղում յեղած բոլոր կանխիկ դրամը, արժեքները ու արժեքավոր բլանկները։ Ընդամին պետք է ապահովվի ստուգման անակնկալությունը, վորի համար էլ այն պետք է անմիջապես սկսվի հենց վոր ստուգողը ներկայանում է խնայդրամարկղում։

Դրամի, արժեքների և բլանկների կանխիկը պետք է համեմատվի նրանց այն մնացորդների հետ, վորպիսին դուրս է բերված պահեստարանի մատյանում, գործառնության որագրում և ձև № 25-ա հավելվածում, վորն ստուգված է լինում հաշվապահական հաշվառման տվյալներով։ Արժեքավոր բլանկների համարներն ընդամին պետք է համեմատվեն ձև № 77 հաշվառման տեղեկագրի տվյալների հետ։ Դրամի, արժեքների և բլանկների նատուրան հաշվապահական հաշվառման տվյալների հետ համեմատելու համար՝ անհրաժեշտ է շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղից վերցնել համապատասխան տեղեկություններ (արժեքավոր բլանկների համար՝ տեղեկություններում, բացի քանակից պետք է նաև ցույց տրվեն մնացորդում յեղած բլանկների համարները)։ Այդ տեղեկություններն անհրաժեշտ է համեմատել խնայդրամարկղում յեղող գործառնության որագրի և ձև № 25-ա հավելվածի տվյալների հետ առ այն որը, վորի համար կազմվել են տեղեկությունները և բոլոր հետագա գործառնություններն ստուգելու միջոցով. վորոշել ճիշտ մնացորդները, վորպիսիք ստուգման պահին պետք է լինեն հաշվետվությամբ։

Դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների կանխիկն ստուգելու արդյունքների մասին պետք է կազմվի ակտ՝ ստուգող անձի և ստորին

խնայդրամարկղի աշխատողների (վերահսկչի և գանձապահի) ստորագրություններով։ Ակտում գրվում են դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների այն մնացորդների մասին տեղեկությունները, որոնք կան նատուրայով և գրված են պահեստարանի մատյանում (եթե այն տարվում է խնայդրամարկղում) և գործառնության որագրի ձև № 25-ա ստուգված հավելվածում։ Բացի այդ՝ ստուգման մասին պետք է նշումն արվի պահեստարանի մատյանում կամ գործառնության որագրի ձև № 25-ա հավելվածում։ Դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների նատուրայի և հաշվառման տվյալների միջև որևէ տարբերություն հայտնաբերելու դեպքում՝ ստուգողը պարտավոր է պարզել տարբերության պատճառը և այստեղից էլ բղխող միջոցներ ձեռք առնել։

2. Ստուգողը պետք է համոզվի, թե ապահովվում է արդյոք խնայդրամարկղում գտնվող դրամի, արժեքների և արժեքավոր բլանկների անվթարությունը, նրանց պահելու կանոնները, գանձարկղների կնքման և նրանց բանալիները պահելու կանոնները պահպանվում են արդյոք աշխատակիցների կողմից։ Ստուգել գանձարկղների պետականությունը, նրանց ամրությունը և այլն։ Պահպանում է արդյոք խնայդրամարկղն իրեն համար սահմանված դրամական կանխիկի, արժեքների և բլանկների լիմիտները, նաև դրամը և արժեքներն իրեն շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղին ուղարկելու կարգը։ Ընդսմին՝ եթե կնկատվի արժեքների պահպանման անբավարար վիճակ և պահեստարանային տնտեսությունը վարելու կանոնների խախտում, պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնվեն այն բանի համար, որպեսզի խնայդրամարկղում ապահովվի արժեքների ամբողջությունն ու անվթարությունը։

3. Ստուգման ամբողջ ժամանակի ընթացքում անհրաժեշտ է համեմատել անձնական հաշիվների հետ (իսկ համապատասխան դեպքերում նաև գործառնության որագրում յեղած գրանցումների հետ) հաճախորդների կողմից այդ ժամանակամիջոցում խնայդրամարկղին ներկայացրած խնայդրքույկները, պահպանման վկայականները և գրավադրման անդորրագրերը։ Այդ կարգով ստուգված խնայդրքույկների, պահպանման վկայականների և գրավադրման անդորրագրերի համար պետք է ցուցակ կազմվի։ Ցուցակում նշվում է ստուգման ժամանակը և ստուգված անձնական հաշիվների համարներն ըստ ավանդների, փոխառությունների և ի պահ ընդունված պարտատոմսերի՝ առանձին։

4. Վարիչը (գլխավոր հաշվապահը, տեսուչը) պարտավոր է ստուգել խնայդրամարկղի աշխատակիցների աշխատանքը՝ ավանդների և ավանդատուների ներգրավման գծով և նրանց կողմից ավանդատուներին ու պարտատոմսատերերին սպասարկելու վրակը։ Պարզել, թե բավարար աշխատանք են տանում արդյոք նրանք նոր ավանդատուներ ներգրավելու համար, թե վորքան հստակ, արագ, քաղաքավարի յեն սպասարկվում ավանդատուներն ու մյուս հաճախորդները։ Ըստ պատկանելության է արդյոք ոգտագործվել խնայդրամարկղի կողմից ստացված ագիտացիոն և ռեկլամային նյութերը, կա արդյոք ցուցանակ խնայդրամարկղի աշխատանքների ժամանակի մասին և թե հարմար է արդյոք այդ ժամանակը տեղական բնակչության համար։ Խնայդրամարկղի աշխատողները շենքը պատշաճ մաքրության և կարգ ու կանոնի մեջ են պահում արդյոք։

Պետք է ստուգվի, թե պատշաճ կարգով են արդյոք պահվում ավանդատուների անձնական հաշիվների քարտակալները, պահպանում են արդյոք անձնական հաշիվների և մյուս սահմանված հաշվառման և հաշվետվության փաստաթղթերի վարելու, ձևակերպելու և պահելու կարգը, խնայդրամարկղի աշխատակիցները կատարում են

արդյոք գործառնությունները կատարելու կանոններն ու հրահանգները։

Գիտեն արդյոք խնայդրամարկղի աշխատակիցները գործառնությունների կատարման կանոնները, կան արդյոք խնայդրամարկղում անհրաժեշտ հրահանգներ և շրջաբերականները, աշխատակիցները ծանոթանում են արդյոք նրանց հետ։ Կան արդյոք խնայդրամարկղում կորցրած կամ հափշտակված ակկրեդիտիվների տեղեկագրեր և բոլոր հետագա ռադիոսխեմաները, խաղարկության ադյուսակների կոմպլեկտները։ Խնայդրամարկղն ունի արդյոք գործառնության բլանկների բավականաչափ քանակ և ճշտությամբ են արդյոք նրանք ոգտագործվում։

5. Անհրաժեշտ է հավաստիանալ, թե խնայդրամարկղը պահպանում է արդյոք առևտրական կազմակերպությունների որվա առևտրից գոյացած գումարներից կանխիկ դրամ փոխ առնելու կանոնները։ Դրա համար պետք է այն խանութներից, վորոնց կցված է խնայդրամարկղը դրամը փոխ առնելու համար, ստուգումից առաջ յեղած 20—30 որվա համար ստանալ տեղեկություններ՝ խնայդրամարկղին տված ամրացումների մասին և պարզել, թե այդ գումարները ժամանակին են արդյոք մուտք արվել գործառնության որագրում։

6. Ստուգել աշխատանքային կարգապահության դրությունը, ճիշտ են արդյոք բաշխված և կատարվում խնայդրամարկղի աշխատողների պարտականությունները, գործառնություններ կատարելու ժամանակ չեն խախտվում արդյոք փոխադարձ վերահսկողության սկզբունքները՝ վերահսկչի և գանձապահի կողմից (այն խնայդրամարկղում, որտեղ կան յերկու և ավելի աշխատողներ), չկան արդյոք դեպքեր, յերբ աշխատողները բացակայում են խնայդրամարկղից, վերավստահանալով իրենց աշխատանքն ուրիշ աշխատողին և այլն։

7. Ստուգման հետևանքով հայտնաբերված թերությունների համար պետք է տեղում միջոցներ ձեռք առնվեն նրանց վերացման համար, իսկ ստորին խնայդրամարկղի աշխատողները պետք է հրահանգվեն այնպես, որպեսզի թերությունները այլևս չկրկնվեն հետագա աշխատանքում։

Յերբ խնայդրամարկղին անհրաժեշտ է տալ գրավոր ցուցմունքներ, շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչը (գլխ. հաշվապահը, տեսուչը), որը ստուգում է կատարում, պետք է այդ ցուցմունքները կազմի յերկու օրինակից, որոնցից մեկը ստորագրությամբ հանձնում է ստորին խնայդրամարկղի վարիչին

(վերահսկիչին), իսկ մյուսով հսկում է նրանց կատարմանը։ Ցուցմունքները պետք է լիապես կոնկրետ լինեն, նրանց մեջ պետք է պարզորեն շարադրված լինեն, թե ինչպիսի թերություններ են, ինչպես և ինչ ժամկետներում պետք է վերացնել։

8. Եթե ստորին խնայդրամարկղի ստուգումը կատարել է շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի գլխ. հաշվապահը կամ տեսուչը, ապա նրանք պարտավոր են ստուգման արդյունքների և կատարած աշխատանքների մասին զեկուցել շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչին։

Վերջինս պետք է քննի անցկացրած ստուգման ներկայացրած նյութերը, համոզվի, թե բավականաչափ միջոցներ են ձեռնարկվել տեղում, ճիշտ ցուցմունքներ են արդյոք տրվել խնայդրամարկղին և, յեթե անհրաժեշտ է, իր կողմից ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք բղխում են ստուգման արդյունքներից։

9. Փաստացի ավելցուկներ կամ դրամի արժեքների պակասորդներ ստուգումով պարզելու դեպքում՝ շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչը պարտավոր է անմիջապես միջոցներ ձեռք առնել պակասորդ գումարները գանձելու համար, իսկ անհրաժեշտ

դեպքերում—համապատասխան միջոցներ՝ մեղավոր անձանց նկատմամբ և (գլխ. հաշվապահի հետ միասին) ցուցմունքներ տալ աշխատողներին, պակասորդներն ու ավելցուկները հաշվեարվությունում արտացոլելու կարգի մասին։

10. Չարաշահումներ հայտնաբերելու դեպքում՝ պետք է ապահովի վնասների և մեղավորների լիակատար հայտնաբերումը, կատարվի խնայդրամարկղի խոր ստուգում շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի միջոցներով, իսկ եթե անհրաժեշտ է,—պետք է պահանջվի վերահսկիչ-վերաստուգիչ (վերստուգիչ) խնայդրամարկղների ղեկավար վարչությունից։

Հայտնաբերված չարաշահումների մասին կազմվում է ակտ և անմիջապես (վոչ ուշ, քան չարաշահումը հայտնաբերելու հետեյալ որը) ուղարկվում է ծանուցում իր ղեկավար վարչությանը։

Շրջանային (կենտրոնական) խնայդրամարկղի վարիչը պարտավոր է հեռացնել աշխատանքից այն անձերին, վորոնք մեղավոր են չարաշահումների գործում, համապատասխան միջոցներ ձեռք առնել նրանց պատասխանատվության յենթարկելու և պատճառած փսասները հատուցելու համար, հայտնաբերած չարաշահումների նյութերը հանձնելով քննչական մարմիններին։

Դրա հետ մեկտեղ պետք է միջոցներ ձեռք առնվեն խնայդրամարկղի աշխատանքների առողջացման համար և ապահովվի հեռացրածներին փոխարինելը։

* * *

Ցուրաքանչյուր կատարած ստուգման և դրա հետ միասին խնայդրամարկղի աշխատանքներում հայտնաբերած թերությունների մասին պետք է արվի համապատասխան գրանցում «Ստորին խնայդրամարկղների վերստուգման և հետազոտությունների մատյանում», վորը տարվում է շրջխնայդրամարկղում։

«Վերստուգման աշխատանքների և չարաշահումների դեմ պայքարելու մասին» ձև № 03 յեռամսյակային հաշվետվության մեջ՝ կենտրոնական և շրջանային խնայդրամարկղները պետք է տեղեկություններ նշեն յեռամսյակային ստուգումների քանակի մասին, վորոնք կատարվել են ստորին խնայդրամարկղներում՝ շրջխնայդրամարկղների ղեկավար մարմնի կողմից։ Տեղեկությունները այդ ստուգումների մասին, կրկնվող վերստուգումների և ստուգումների տեղեկությունների հետ, վորոնք կատարվել են վերաստուգող ապարատի կողմից՝ ձև № 03 հաշվետվության մեջ ցույց է տրվում տարվա սկզբից՝

«կատարված կրկնակի վերստուգումների և ստուգումների քանակը» սյունակում։ Յեթե խնայդրամարկղը տարվա ընթացքում ստուգման և յենթարկվել չորս անգամ, ձև № 03 հաշվետվության նշված սյունակում մտցվում են 4 ստուգումներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Ձև № 03 հաշվետվության լեղած բլանկներն ոգտագործելու ժամանակ՝ ստուգումների տեղեկությունները ցույց են տրվում 1-ին հավելվածի 3 սյունակում, ընդվորում այդ սյունակի տեքստ վերնագիրն անհրաժեշտ է փոխարինել հետևյալով՝ «կատարված վերստուգումների և ստուգումների քանակը»։

Դրա հետ միասին Գլխավոր Վարչությունն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ուժեղացնել վերհսկողությունը կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղների կողմից՝ շրջֆինբաժնի գործակալների փոխառության գծով լեղած աշխատանքների վրա։ ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1938 թ. 16 սեպտեմբերի № 502/191 նամակում տրված ցուցմունքներին համապատասխան, գործակալների աշխատանքների ստուգումը պետք է անցկացվի շրջֆինբաժինների վարիչների հետ համաձայնեցնելով, նրանց կողմից սահմանվող ժամկետներում։ Փոխառության աշխատանքների նկատմամբ՝ ֆինգործակալների ստուգումը պետք է ընդգրկի

հետևյալ հարցերը՝ տանում է արդյոք գործակալը հաշվառում և հաշվետվություն՝ սահմանված ձևերով, արդյոք իր ժամանակին և ամբողջությամբ է գործակալը մուտք անում իր հաշվետվությունով և հանձնում խնայդրամարկղին՝ լիազորներից ստացված փոխառության մուծումները, համապատասխանում է արդյոք գործակալի մոտ յեղած դրամիպարտատոմսերի և հաշվարկային անդորրագրերի չոգտագործած բլանկների մնացորդի կանխիկն այն մնացորդին, վորը հաշվառման տվյալներով պետք է լինի գործակալի մոտ՝ առ ստուգման որը։

Շրջխնայդրամարկղների վարիչներն ու գլխավոր հաշվապահները պետք է ապահովեն շրջֆինբաժինների հարկային և ապահովագրական տեսուչների հրահանգումը՝ ֆինգործակալների փոխառությունների աշխատանքներն ստուգելու կարգի մասին։

Խնայդրամարկղների Վարչությունները պետք է վերահսկողություն սահմանեն այն բանի վրա, վորպեսզի շրջ (կենտ) խնայդրամարկղներն ստուգեն իրենց ստորին խնայդրամարկղների ամբողջ ցանցն յուրաքանչյուր յեռամսյակում և ապահովվի անհրաժեշտ վերահսկողություն՝ շրջ-

577

Ֆինաժնի գործակալների փոխառության աշխատանքների վրա։ Վարչությունների վերահսկիչ—վերաուղիչները, տեսուչները և հաշվապահ-տեսուչները պարտավոր են խնայդրամարկղների վերաուղումների և հետազոտությունների ժամանակ ստուգելու այդ ստուգումների վրաները, այս կարգադրության կատարման լրիվությունը և հրահանգել կենտրոնական և շրջանային խնայդրամարկղների աշխատողներին՝ նրանց կողմից ստորին խնայդրամարկղների աշխատանքները պարբերաբար ստուգելու համար։

Պետախնայդրամարկղների յեվ Պետվարկի Գլխավոր Վարչության պետի
տեղակալ՝ Ցե. ԴՐՈՒՑՍ.

[illegible]ահանկչական-Վերստուգչական
Բաժնի պետ՝ Գ. ԳՈՑԴՈ

[illegible]ավոր Հաշվապահ՝ Վ. ՄԻՏԻՆ

ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.

Պատ. խմբ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմ. յեվ կոնտրոլ ստրք. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրավոր լիազոր՝ Ն. 2933, Պատվեր № 406 Տիրաժ 300
Հանձնված է արտադրության 25 հոկտեմբերի 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 22 նոյեմբերի 1939 թ.

Մանկ. Ինստիտուտի տպարան, Մարքսի փող. № 17, Յերեվան

336
Խ-11

ՀՀ Ազգային գրադարան
NL0208214